**ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N T-09/26**

գ. Նոռաշեն 26 «սեպտեմբերի» 2025թ.

«ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Արմեն Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության համաձայն (այսուհետև՝ «Գործընկեր 1»), մի կողմից և «ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ «Գործընկեր 2»)՝ ի դեմս տնօրեն Խաչատուր Համզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության համաձայն, մյուս կողմից, այսուհետ միասին Կողմեր, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն Կոնսորցիումի պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Կողմերը պարտավորվում են, առանց իրավաբանական անձ ստեղծելու, միավորեն իրենց մասնագիտական ունակությունները, մասնագիտական փորձառությունները և այն ամենը, ինչը անհրաժեշտ կլինի շինարարական աշխատանքների կատարման համար և գործել համատեղ (կոնսորցիումով)՝ շահույթ ստանալու նպատակով՝ մասնակցելով «ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/7» ծածկագրով բաց մրցույթին և հաղթող ճանաչվելու դեպքում իրականացնելով Ալավերդու համայնքապետարանի կարիքների համար՝ Ալավերդի համայնքի /Արդվի, Կարմիր Աղեկ, Հագվի, Ծաթեր/ ճանապարհների տուֆ քարով սալարկման, կապիտալ վերանորոգման աշխատանքները:

## 2. Մասնակիցների ավանդները

**2.1** Պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքների կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը ապահովելու համար Գործընկեր 1-ը ներդնում է հետևյալ ավանդները.

2.1.1 Կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, տեխնիկական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, մասնագիտական գիտելիքներ, ունակություններ ու անհրաժեշտ այլ հմտություններ.

**2.2** Պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքների կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը ապահովելու համար Գործընկեր 2-ը ներդնում է հետևյալ ավանդները.

2.2.1 Շինարարության իրականացման լիցենզիա՝

Տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն) և մասնագիտական խորհրդատվություն:

2.3 Սույն Պայմանագրի շրջանակներում Մասնակիցների ներդրած ավանդները սահմանվում են հետևյալ հարաբերակցությամբ.

Գործընկեր 1 - 97%

Գործընկեր 2 - 3%

## 3. Ընդհանուր գործերի կառավարում

3.1 Գործընկեր 1-ը պարտավորվում է համատեղ և համապարտ պատասխանատվության գործողությունների շրջանակներում կառավարել և վարել ընդհանուր գործերը՝ տեղյակ պահել Գործնկեր 2-ին:

3.2 Կողմերի ընդհանուր գործողությունների շրջանակներում հաշվապահական հաշվառման վարումը իրականացնում է Գործընկեր 1-ը, ինչպես նաև «ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/7» գնման ընթացակարգին, կազմում, ստորագրում և կնիքում է նշված ընթացակարգին առնչվող բոլոր փաստաթղթերը:

3.3 Գնման ընթացակարգում հաղթող ճանաչվելու դեպքում աշխատանքների կատարման պայմանագիրը ստորագրում և կնքում է Գործնկեր 1-ը, պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են վերջինիս:

3.4 Երրորդ անձանց հետ հարաբերություններում, Կողմերի անունից ցանկացած գործարք կնքում է Գործընկեր 1-ը, որի այդպիսի գործարքներ կնքելու իրավասությունը հավաստվում է սույն Պայմանագրով Գործընկեր 2-ի կողմից տրված լիազորագրով:

3.5Կողմերից յուրաքանչյուրն, անկախ ընդհանուր գործերը կառավարել լիազորված լինելուց, իրավունք ունի ծանոթանալու համատեղ գործողությունների վերաբերող բոլոր կարևոր փաստաթղթերին, ինչպես նաև ստանալ գործին վերաբերող կարևոր ցանկացած այլ տեղեկություններ:

**4. Ավանդների օգտագործման կարգը**

**4.1** Կողմերից յուրաքանչյուրի ներդրած ավանդը, որին նա տիրապետում է սեփականության իրավունքից տարբերվող հիմքերով կամ, որը չի կրում գույքային բնույթ, օգտագործվում է ի շահ Կողմերի և սույն Պայմանագրով սահմանված համատեղ գործունեության նպատակների իրականացմանը:

**5. Համատեղ և համապարտ պատասխանատվություն գործունեության արդյունքում ստացված եկամուտների բաշխումը մասնակիցների միջև**

**5.1** Սույն Պայմանագրի շրջանակներում ստացված եկամուտները հանդիսանում են Մասնակիցների ընդհանուր բաժնային սեփականությունը և նրանց միջև բաշխվում են հետևյալ հարաբերակցությամբ.

Գործընկեր 1 - 97%

Գործընկեր 2 - 3%

**5.2** 5.1 կետում նշված եկամուտները Մասնակիցների միջև բաշխվում են Պատվիրատուի կողմից համապատասխան վճարումները կատարելուց հետո:

**5.3** Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ազատ տնօրինելու շահույթի իր բաժինը:

**6. Կողմերի պատասխանատվությունն ընդհանուր պարտավորությունների համար**

**6.1** Գործընկեր 1-ն է կրում ընդհանուր ծախսերը, մասնավորապես ֆինանսական բոլոր պարտավորությունները և անհրաժեշտ ծախսերը կրում է Գործընկեր 1-ը :

**7. Պայմանագրի գործողության ժամկետը և լուծման կարգը**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերով ստորագրելու պահից և գործում է մինչև Ալավերդու համայնքապետարանի կարիքների համար՝ Ալավերդի համայնքի /Արդվի,Կարմիր Աղեկ,Հագվի,Ծաթեր/ ճանապարհների տուֆ քարով սալարկման, կապիտալ վերանորոգման աշխատանքների ավարտը:

7.2 Կողմերից մեկի սույն Պայմանագրին մասնակցելուց հրաժարվելու դեպքում, այդ մասին մյուս Կողմը պետք է ծանուցվի մասնակցելուց հրաժարվելու առնվազն 30 (երեսուն) օրացույցային օր առաջ, եթե Կողմերը չեն գալիս այլ փոխադարձ գրավոր համաձայնության:

7.3 Սույն Պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կատարվում են գրավոր և ստորագրվում են Կողմերով:

**8. Եզրափակիչ դրույթներ**

8.1 Սույն Պայմանագրով չկարգավորվող որևէ հարցերի վերաբերյալ Կողմերը ղեկավարվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

8.2 Սույն Պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները և այլ հաղորդակցությունները պետք է լինեն գրավոր և հանձնվեն անձամբ (գրավոր ստացականով) կամ ուղարկվեն ֆաքսով (գրավոր հաստատումով) համապատասխան ֆաքսի համարով կամ պատվիրված նամակով՝ Կողմի գտնվելու վայրի հասցեով:

8.3 Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են 2(երկու) շաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

8.4 Սույն Պայմանագիրը կարող է լրացվել և փոփոխվել միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ երկկողմ ստորագրված մեկ փաստաթուղթ կազմելու ձևով, ուստի և

ցանկացած միակողմանի գրություն և դրան տրված գրավոր պատասխան կամ լռություն չի կարող մեկնաբանվել որպես սույն Պայմանագրի փոփոխություն կամ լրացում:

8.5 Սույն Պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում ամբողջ պայմանագրի կամ պայմանագրի որևէ այլ դրույթի անվավերությանը, եթե համապատասխան դրույթի անվավերությունը չի խոչընդոտում պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը և սույն Պայմանագրի նպատակի իրականացմանը:

8.6 Պայմանագիրը կազմված է 2(երկու) օրինակից, յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

8.7 Սույն Պայմանագրի որևէ լրացում կազմում է դրա անբաժանելի մասը:

8.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը

## 9. Կողմերի հասցեները, ստորագրությունները

**Գործընկեր 1**
«ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ
գ. Նորաշեն, Կ. Դեմիրճյան 106
«ԱԿԲԱԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220143330300000
ՀՎՀՀ 06953205
Հեռ. 093475448
Էլ. փոստ transshin25052017@mail.ru

-----------------------------Ա. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Digitally signed by BAGHDASARYAN ARMEN 3714740031
Date: 2025.09.28 22:00:21 AMST

**Գործընկեր 2**
«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ
ք. Իջևան, Նալբանդյան 1/5
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Իջևանի մ/ճ
Հ/Հ 163508005945
ՀՎՀՀ 07613551
Հեռ. 093191200
Էլ. փոստ hamzyan@mail.ru

---------------------------- Խ. Համզյան
(ստորագրություն)
Կ.Տ

Digitally signed by HAMZYAN KHACHATUR 1801810176
Date: 2025-09-28 20:44:05